ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

«24» դեկտեմբերի 2018թ.
№ ԳԱԱ-3585/ի

***«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Առաքելյանին***

Հարգելի պարոն Առաքելյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի №58Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №742Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 8 էջ:

***Ա. Սաֆարյան***

Կատարող՝ Շ. Սողոմոնյան ☎56-49-27 (345)

600.0742.21.12.18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2018 թվականի №742Ա
ք.Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի №58Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետը, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100Ն օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախաձեռնությամբ կատարվող փոփոխությունն անհրաժեշտ է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պատշաճ կատարումն ապահովելու համար՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը բնական գազի փոխադրման լիցենզիա տրամադրելու մասին» №58Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
21 դեկտեմբերի 2018թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի դեկտեմբերի 21-ի №742Ա որոշման

«Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2003 թվականի սեպտեմբերի 22-ի №58-Ա որոշմամբ

# «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բնական գազի փոխադրման №0111 լիցենզիայի

# ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## 1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացություններն են.

1) **Բաշխող՝** բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձ

2) **Լիցենզավորված անձ՝** «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

4) **Համակարգի օպերատոր՝** գազամատակարարման համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձ:

## 2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ՎԱՅՐԸ)

2. Սույն լիցենզիան ուժի մեջ է մտնում 2003 թվականի սեպտեմբերի 29-ից:

3. Սույն լիցենզիան գործում է մինչև 2019 թվականի սեպտեմբերի 29-ը:

4. Սույն լիցենզիայի՝ սույն գլխով նախատեսված ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

5. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության տարածքն է:

## 3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում իրականացնելու բնական գազի փոխադրման գործունեություն Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

7. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին անձին տրվում է Հանձնաժողովի սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության տարածքում բնական գազի փոխադրման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), բնական գազ փոխադրելու, արտադրողից (արդյունահանողից) կամ ներկրողից բնական գազ գնելու և օրենքով սահմանված կարգով բնական գազ վաճառելու, Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ բնական գազ տարանցելու իրավունք:

8. Լիցենզավորված անձի կողմից մատուցվող բնական գազի փոխադրման սակագինը սահմանում (վերանայում) է Հանձնաժողովը՝ համաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հանձնաժողովի այլ իրավական ակտերի:

## 4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

10. Լիցենզավորված անձի և գազամատակարարման համակարգում լիցենզավորված այլ անձի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին: Լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրերը ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

11. Լիցենզավորված անձը, լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ օգտակար և օգտագործվող ակտիվների ավելացմանը կամ փոխարինմանն ուղղված ներդրումներ կատարելու դեպքում, պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել այդ ներդրումային ծրագրերը՝ սակագնում ներդրումների (ամբողջական կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով:

12. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից և ներառվում բնական գազի փոխադրման սակագնում:

13. Լիցենզավորված անձը պարտավոր է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ կատարել Համակարգի օպերատորի հրահանգները (կարգադրությունները):

14. Լիցենզավորված անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող

գազամատակարարման համակարգի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող՝ Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող, ինչպես նաև իրեն հավատարմագրային կառավարման հանձնված պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննումերին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ:

15. Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ իր կողմից փոխադրվող և ներքին սպառման հաշվեկշռի մեջ հաշվառվող բնական գազի ծավալների նվազեցմանը հանգեցնող միջոցառումների պլանները Լիցենզավորված անձը պետք է համաձայնեցնի Հանձնաժողովի և Համակարգի օպերատորի հետ ոչ պակաս, քան միջոցառումներն սկսելուց 12 ամիս առաջ:

16. Լիցենզավորված անձը պարտավոր է Համակարգի օպերատորի հետ համաձայնեցնել իր, ինչպես նաև իրեն հավատարմագրային կառավարման հանձնված հիմնական սարքավորումների (այդ թվում՝ գազատարների, գազաբաշխիչ և ճնշակային կայանների) հաջորդ տարվա նորոգումների ժամանակացույցը:

17. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով բնական գազի ստորգետնյա պահեստարաններում պահեստավորել Ներկրողի և (կամ) Արտահանողի և (կամ) Բաշխողի և (կամ) սպառողի սեփականությունը հանդիսացող բնական գազը:

18. Հանձնաժողովը, տեղյակ պահելով Լիցենզավորված անձին, Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան, իր սահմանած կարգով և ժամկետներում, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ, իր կողմից ընտրված անկախ փորձագիտական ընկերության կամ անկախ փորձագետների միջոցով կարող է իրականացնել Լիցենզիայի պայմանների կատարման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների հավաստիության ստուգում: Ուսումնասիրության և ստուգման ծախսերը ներառվում են Լիցենզավորված անձի կողմից մատուցվող բնական գազի փոխադրման սակագնում: Սակագնով այդ ծախսերի փոխհատուցումը կարող է լրիվ կամ մասնակիորեն չիրականացվել, եթե ուսումնասիրության կամ ստուգման արդյունքում հայտնաբերվել է, որ Լիցենզավորված անձի կողմից ներկայացվել է թերի կամ ոչ հավաստի տվյալներ:

19. Լիցենզավորված անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև Լիցենզավորված անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի սահմանած կարգով նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

20. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համար Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի սահմանած կարգով նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

21. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

22. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ գործունեության մեջ ներգրավված գույքի հասանելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

24. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

25. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

26. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

27. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո, իսկ տարեկան հաշվետվությունը մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու դեպքում՝ դրանց հաստատումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել Հանձաժողով, ինչպես նաև հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am կայքում: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից և ներառվում բնական գազի փոխադրման սակագնում:

28. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

29. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե դա Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չի որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձի ներկայացրած գաղտնապահական տեղեկատվության հետ կապված հարցերը կարգավորվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

30. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

2) Լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

3) Լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

38. Սույն լիցենզիայի պայմանների իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.

2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, չի երկարաձգվել սույն լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ Լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

39. Սույն լիցենզիայի պայմանների 38-րդ կետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ սույն գլխի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:

## 7. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

40. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

41. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

12. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում սույն լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

(ընկերության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի 6փ. 1

(գտնվելու վայրը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ»: